**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» հոկտեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

*Մասնակցում էին՝*

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Աղավնի Բուդոյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-08» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտի բացման մասին.**

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացման ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի հոկտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման առարկաների ընդհանուր գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Դրոշներ | 218 000 |
| 2. | ՀՀ զինանշան | 180 000 |

| | | |
|---|---|---|
| 3. | Սոսնձամատիտ, գրասենյակային | 658 400 |
| 4. | Կարիչ, 50-ից ավելի թերթի համար | 884 000 |
| 5. | Գրիչ, գելային | 835 000 |

3. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|
| «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. (010) 558483 |

4. Համակարգում 17.10.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**5. Տվյալներ՝ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**7. Մասնակցի առաջարկած գները՝**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Դրոշներ | 266 500,00 | 58 500,00 | 325 000,00 | 65 000,00 | 390 000 |
| 2 | ՀՀ զինանշան | | | | | |
| 3 | Սոսնձամատիտ, գրասենյակային | 719 850,67 | 158 016,00 | 877 866,67 | 175 573,33 | 1 053 440 |
| 4 | Կարիչ, 50-ից ավելի թերթի համար | 1 417 780,00 | 311 220,00 | 1 729 000,00 | 345 800,00 | 2 074 800 |
| 5 | Գրիչ, գելային | 1 734 573,33 | 380 760,00 | 2 115 333,33 | 423 066,67 | 2 538 400 |

**8. Տեղեկատվություն՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.**

8.1 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները (ներկայացված գնային առաջարկներում ինքնարժեքի և ինքնարժեքի նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի հանրագումարները ևս գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները). հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ նշված չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի:

8.2 2-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում), 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն (ոչ մի հայտ չի ներկայացվել):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**9. Հանձնաժողովը որոշեց.**

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-08» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Արման Ղուկասյան

Քարտուղար՝ Արոա Խաչատրյան